1-ին շաբաթ

Թեմա՝
«Նախորդ տարվա ամփոփում և հույսեր՝ նոր ուսումնական տարում»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 որպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

Հարցեր՝

1. Ի՞նչ է ձեր անունը:
2. Ի՞նչ սպասումներ ունեիք նախորդ ուսումնական տարվանից:
3. Ինչպե՞ս է անցել նախորդ ուսումնական տարին:
4. Ի՞նչ եք սովորել նախորդ ուսումնական տարում:
5. Ի՞նչն է ձեզ դուր եկել նախորդ ուսումնական տարում:
6. Ի՞նչը ձեզ դուր չի եկել նախորդ ուսումնական տարում:

7. Ինչպե՞ս եք անցկացրել արձակուրդը:
8. Ի՞նչ է փոխվել այս ուսումնական տարում:
9. Ի՞նչ կուզեիք սովորել նոր ուսումնական տարում:
10. Ինչպե՞ս կցանկանայիք անցկացնել դասաժամերը նոր ուսումնական տարում:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

Կիրառելի բառեր և արտահայտություններ՝

ազատ ժամանակ	հուսալ
ակնկալել	նախորդ տարի
անցած տարի	նոր գիտելիքներ
անցյալ տարի	նոր ընկերներ
արդյունավետ դասեր	նոր ծանոթություններ
լսարաններ	ուսանողական կյանք
հետաքրքիր դասեր	սպասել
հետաքրքիր ժամանց	քննություններ

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

***

Բնագրի նմուշ՝ 1

Բարև ձեզ: Ես Մարի Աղայանն եմ: Սովորում եմ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում Արևելյան մասնաճուղում 4-2 դասարանում: Մենք սովորել ենք քերականական նյութեր: Գովազդել ենք մեր կարդացած հեքիաթները, պատմվածքները, առակները և հանրագիտարանները: Գրել ենք մեր դասարանի մասին : Կարդացել ենք շատ հետաքրքիր հեքիաթներ գրքեր: Ճամփորդել ենք Ավետիք Իսակյանի տուն- թանգարան, սահադաշտ, բայց ես իմ դասարանի հետ չեմ գնացել, որովհետև ես այդ ժամանակ հիվանդ էի, կինոթատրոն և

Մատենադարան: Դասարանում կատարել ենք շատ-շատ թեստային աշխատանքներ օրինակ՝ Հովհաննես Թումանյան Գելը , Մարկ Տվեն. Թոմ Սոյերի արկածները. : Մենք ամսի տասին իմ դասարանի հետ գնացել էինք բակ, բակում արեցինք մի փոքրիկ նախագիծ: Այդ նախագծում մենք մեր ընթերցում էինք գրքեր ու պատմում: Ես ավելի շատ հավանել եմ մեր գրած գովազդները, որովհետև այդ նախագիծը ինձ համար շատ հետաքրքիր էր: Մայիսյան հավաքին սկսեցինք նոր նախագիծ՝ Ամփոփում եմ իմ ուսումնական տարին, որը հենց հիմա դուք կարդում եք: Շնորհակալություն, որ դուք իմ բլոգում եք և կարդացիք: Այս ամփոփումը գրում է Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի սովորող Արևելյան մասնաճյուղի 4-2 դասարանի սովորող Մարի Աղայանը:

Բնագրի նմուշ՝ 2

Բարև ձեզ ես Անի Մինասյանն եմ, սովորում եմ 4-2 դասարանում: Մենք այս տարի ընկեր Մարինեի հետ ճամփորդեցինք Իրինա Ռոդնինայի անվան սահադաշտ, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան և Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան: Ես նոր ուսուցչուհիների հետ ծանոթացա ու շատ հավանեցի նրանց: Ես այս տարի նոր գիրք ու տարբեր պատմվածքներ կարդացի, նոր գիտելիքներ ձեռք բերեցի: Կարդացածս ամենատպավորիչ պատմվածքը «Թոմ Սոյերի Արկածներ»-ն էր: Իսկ կարդացած գիրքերից ամենատպավորիչն ու ուսուցողականը՝ մանկական Աստվածաշունչն էր: Ես նաև ունեմ անձնական ռադիո: Իմ ռադիոի անունը «Հարցասեր» ռադիո է: Եթե դուք ուզում եք լսել իմ ռադիոնյութերը, գրեք Անի Մինասյանի բլոգ և լսեք իմ ռադիոնյութերը: Չորրորդ դասարանը ես միշտ կսիրեմ:

Աղբյուր՝ animinasyanblog.wordpress.com/2019/05/13/ամփոփում-ենք-ուսումնական-տարին/